

# ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՕԱՄՈՒԵԼ. ԲԺԱ.Ա.ՆԵԱՆԻ

## I

Կենդանիների հասարակութիւնները և դրցա կազմակերպութիւնները պատկանում են այն երևոյթների թւին, որոնք մեծ հետաքրքրութեամբ ուսումնասիրում են այժմեան գիտնականների կողմից: Դժւար չէ բացադրել, թէ ի՞նչու այդպիսի մեծ ուշադրութեան արժանացել է կենդանիների հասարակական կեանքը. բանը նրանումն է, որ հասարակական երևոյթները կենդանիների շրջանում նշանաւոր են ոչ միայն իբրև լոկ մասնագիտական-կենդանական երևոյթներ:

Այժմ այդ երևոյթների ուսումնասիրութեան վրայ ուրիշ յոյսեր են դնուում: Ենթադրում է, որ կենդանիների հասարակութիւնների ուսումնասիրութիւնը կարող է լոյս սփռել նաև մարդկային հասարակութեան երևոյթների վրայ: Այդ պատճառով կենդանիների հասարակական կեանքով հետաքրքրում են ոչ միայն կենդանաբանները, այլ և նոքա, որոնք պարապում են հասարակական գիտութիւններով:

Սակայն որքան իրաւացի են այդ տեսակ յոյսերը:

Ի՞նչ յարաբերութիւն կայ կենդանական և մարդկային հասարակութիւնների մէջ: Արդեօք կարմղ են համանման համարւել այդ երկու տեսակի հասարակական երևոյթները, թէ ընդհակառակը նրանց մէջ ոչինչ նշանութիւն կամ կապ չկայ:

Այդ հարցին զանազան ժամանակներ տարբեր պատասխաններ

են աւել դիտնականները և փիլիսոփանները։ Արիստոտելը՝ զբաղվելով մարդկանց հասարակական կազմակերպութեան, խնդրով թէև ուղղակի չէ պատասխանում վերև բերած հարցին, բայց մարդկալին հասարակութեան վերաբերամբ նրա արտացացած մոքերը ցուց են տալիս, որ նա աւելի հակւած էր մարդկացին և կենդանական հասարակական երեսվթները համանման՝ մի տեսակի երեսվթներ՝ համարելու։

Սակայն չետապաչ ժամանակներում այդ հացեացքը մի շաբանշանաւոր հակառակորդներ ունեցաւ, օրինակ Լոկլը, Հորբարը, Բառայդ փիլիսոփանների ոչինչ նմանութիւն չկաչ կենդանիների և մարդկանց հասարակութիւնների մէջ։ մարդկանց հասարակութիւնը փոխադարձ համաձայնութեան կամ պայմանի հետեւանք է, ուրիշն մի տեսակ արեւեստական բան է, մինչդեռ մեղսների, կուզբերի (նօրի), մրջնենների և միւս անինների հասարակութիւնները կազմում են բոլորովին տարբեր կերպով՝ անդիտակցաբար, ուսափ նրանց վերաբերմամբ խօսք էլ չի կարող լինել որ և է պայմանի մասին։

«Համերաշխութիւնը կամ միաբանութիւնը կենդանիների շրջանում, ինքն ըստ ինքեան, բնական է, մինչդեռ նոյն միաբանութիւնը մարդկանց շրջանում հետեւանք է համաձայնութեան, ուստի և արւեստական է»— տառում է, Հորբար<sup>1)</sup>։

Այդ փիլիսոփայութիւնը աւելի ևս հիմնաւորւեց գիտութեան մէջ շնորհիւ հռչակաւոր Խուստօին, որը, ինչպէս յայսնի է, նոյնպէս համարում էր մարդկացին հասարակութիւնը արդիւնք փոխադարձ համաձայնութեան կամ պայմանի։

Հակադասելով կենդանական հասարակութիւնը մարդկացին հասարակութեանը, Հորբար, Լոկլը և Խուստօն նաև հակառակ մեթոդներ էին առաջարկում նրանց ուսումնասիրութեան համար։ Կենդանական հասարակական երեսվթները պէտք է ուսումնասիրւն ինչպէս բոլոր բնական երեսվթները, մինչդեռ մարդկացին հասարակութիւնները, ոչինչ կապ չունենալով բնական երեսվթների հետ, չեն էլ կարող հետազոտել այդ վերջինների նման։ Ահա այդ մոածողների հայեացքը։

<sup>1)</sup> Հորբար վերև բերած խօսքերը վերցրած են Կոպինասից։

Նմշ նսկատակներից դուրս է մանրամասը կերպով առաջ բերել բոլոր գիտնականների և փիլիսոփանների կարծիքները վերոյիշեալ հարցի վերաբերմամբ, այդ պատճառով ես կանգ չեմ առնիլ Հեգէի, Առնդորսէի, Օգիւսու Կռնտի, Սպենսէրի և միւնների հայեացքների վրաց, միմիացն կը նկատեմ, որ շնորհիւ դոցա ջանքերին՝ նորից փոխեց մատար հոսանքը վերաբերեալ մեզ հետաքրքրող հարցին:

Նախ և առաջ ասկացուցւեց, որ մարդկացին հասարակութիւնը ամենեին չի կազմում այնպէս, ինչպէս երևակացում էին Հորբար, Լոքը և Խուսաօն, այսինքն փոխադարձ համաձայնութեան կամ պայմանի շնորհիւ. ամեն մի մարդկացին հասարակութիւն կազմել է զեռ այն ժամանակները, երբ հասարակութիւնը կազմող անհատները այնքան տղէտ ու մութն էին, որ անկարող կը լինէին գիտակցարար միութիւն ստեղծել՝ կապւելով իրար հետ ընդհանուր պայմանով։ Մարդկացին հասարակութիւնը սկզբում եղել է շատ հասարակ՝ ինչպէս շատ կենդանական հասարակութիւններ. յետոյ դարերի ընթացքում ենթարկվել է բազմաթիւ փոփոխութիւնների, որոնց շնորհիւ աւելի ու աւելի բարդացել է։

Բայց որովհետեւ նոյն գծերով արտայացուում է նաև կենդանիների հասարակութիւնը, ուստի անհնարին է մարդկանց և կենդանիների հասարակութիւնների մէջ երևակայել անանցնելի անդունդ. զրանք համանման, մի տեսակի, երևոյթներ են։ Այդպիսով փոքր առ փոքր ոչնչացաւ այն չինական պարիսպը, որ զրել էին Հորբար և նրա համախոհները կենդանիների և մարդկանց հասարակութեան միջեւ։

Գուցէ ընթերցողը կարծի, թէ այդ պարսպի ոչնչանալը առանձին նշանակութիւն չունի։ Սակայն այսպէս դատելը սխալ է հետեւեալ պատճառով։

Բանը նրանումն է, որ եթէ հնար չլինէր հերքել Խուսաօնի, Հորբար և Լոքըի կարծիքները, եթէ վերջնականապէս ապացուցւեր այն միաքը՝ թէ կենդանիների և մարդկանց հասարակական երևոյթները կատարելապէս տարբեր, նոյն իսկ հակառակ երևոյթներ են, այն ժամանակ կենդանիների հասարակական կեանքի ուսումնասիրութիւնը ոչինչ լոյս չի կարող սփակել մարդկացին հասարակութիւնների վրաց։ Մարդկացին և կենդանական հասարակութիւնները կը

լինին ընդմիջա իրարից անջառուած և իրար հետ ոչինչ յարաբերութիւնն չունեցող երեսյթներ:

Այժմ ուրեմն, ինչպէս վերև նկատեցի, գիտնականների և փիլիսոփանների մեծամասնութիւնը անանցնելի անդունք էի դնում կենդանիների և հասարակական երեսյթների միջև, այլ համարում է նրանց մի տեսակի երեսյթներ, որոնց մէջ կայ միայն այն զանազանութիւնը, որ հասարակական երեսյթները կենդանիների շրջանում անհամեմատ աւելի պարզ և հասարակ են քան նոյն երեսյթները մարդկանց շրջանում:

Նախորդ յօդւածներիս մէկի մէջ, խօսելով կենդանիների մտաւոր և բարոյական ընդունակութիւնների մասին, ևս աշխատեցի ծանօթայնել ընթերցողին այն դազափարների հետ, որոնք իշխում են դիտութեան մէջ վերաբերեալ ազգ ընդունակութիւններին: Մենք տեսանք այն յօդւածից, որ մարդկանց և կենդանիների մտաւոր ուրարոյական ընդունակութիւնների միջև շատ էլ մեծ տարրերութիւն չկաց, ընդհակուռակը դրանք կատարելապէս նման են իրանց հիմնական գծերով: Զանազանութիւնը նրանումն է միայն, որ կենդանիների մտաւոր ու բարոյական ընդունակութիւնները անհամեմատ աւելի հասարակ են ու պարզ քան մարդկանցը: Առաջ գոյութիւն ուներ միայն մարդկային հոգեբանութիւնը, խակ այժմ ծագել է նոր դիտութիւն՝ այն է կենդանիների հոգեբանութիւնը, որը, պարունակելով իր մէջ հոգեբանական պարզ ֆակտեր, պէտք է ուսումնասիրւի մարդկային հոգեբանութիւնից առաջ: Պարզ է, որ մարդկային հոգեբանութիւնից շատ երեսյթներ կը մնան մեզ համար անբացարելի եթէ առաջ մենք չծանօթանանք նոյն երեսյթների հետ կենդանիների շրջանում: և այդ հասկանալի է, որովհետեւ մարդկանց հոգեկան երեսյթների արմատները երեան են գալիս կենդանիների շրջանում:

Ինչ որ ասացի մտաւոր ու բարոյական ընդունակութիւնների մասին, նոյնը կարելի է կրկնել նաև կենդանիների ու մարդկանց հասարակական երեսյթների մասին. այսաեղ նոյնպէս մեծ նշանակութիւն ունի նաև ծանօթանալ կենդանիների հասարակական կեանքի հետ, որը ընդունակ է մեծ ծառայութիւն անել նոցա, որոնք ձեռնարկում են մարդկային հասարակութեան ուսումնասիրութեանը:

Ահա ինչ է ասում այս մասին ողբովեսոր Մենզբիրը.

Այժմ սոցիոլոգիան (հասարակական գիտութիւն) մենք պէտք է համարենք բնագիտութեան մի բաժին, որի նպատակն է ուսումնասիրել ու հետազոտել այն օրէնքները, որնց շնորհիւ ծաղում են հասարակութիւնները առհասարակ. և եթէ սոցիոլոգները մոցնեն իրանց հետազօտութիւնների շրջանը նաև կենդանիներին, այն ժամանակ նրանք չեն դանիլ մարդու հասարակական կեանքի շատ երեսոցների արմատաւում...<sup>1)</sup>:

## II

Առաջ, քան սկսեմ նկարագրել կենդանիների հասարակութիւնների կազմակերպութիւնը, աւելորդ չի լինիլ մի քանի խօսք ասել այն կարգի մասին, որին պէտք է հետևեմ. նպատակիս հասնելու համար: Հասկանալի բան է, որ հասարակական կեանքը միենոն ձեւերով չէ արտացայտում դանազան կենդանիների շրջանում: Կան կենդանիներ, որոնց հասարակութիւնը վերին աստիճան բարդ է կազմակերպւած և զարմացնում է մարդուն իր զարգացման բարձր աստիճաններով: Կան և աւելի պարզ հասարակութիւն ունեցող կենդանիներ. վերջապէս կան և այնպիսի կենդանիներ, որոնց հասարակական կեանքը արտացայտում է զեռ չափազանց անորոշ գծերով, այնպէս որ դժւար է լինում այդ տեսակ կազմակերպութեանը իսկական անուն տալ:

Ահա այդ վերջին երեսոյթներից՝ իբրև ամենահասարակներից՝ ես կըսկսեմ իմ նկարագրութիւնը, յետոց կանցնեմ աւելի և աւելի բարդ կազմւած հասարակութիւններին և կը վերջացնեմ յօդւածս ամենաբարդ կազմութիւն ունեցող հասարակութիւններով:

---

Յաճախ պատահում է, որ մի որ և է տեսակ կենդանու բազմաթիւ անհատները կամ նոյն իսկ զանազան տեսակների անհատներ՝ խմբում են միասին, երեք նրա համար, որ աւելի հեշտու-

<sup>1)</sup> Проф. Мензбиръ—Дарвинизмъ въ биологии и близкихъ къ ней наукахъ, 1895.

թեամբ կարողանան զիմաղրել աննպաստ արտաքին պայմաններին։ Օրինակ ամեն տարի որոշ ժամանակ ծովագին ձկները սկըսում են ժողովւել մի տեղ՝ կազմելով ահագին հօտեր։ Այդ խմբակների նսկառակին է ձեռնարկել միասին մի հեռաւոր ճանապարհորդութիւն, երբ խումբը կազմւած սպարաստ է լինում՝ ձկները շարժւում են ուղղելով իրանց ճանապարհը դէպի մեծ գետերի բերանքը։ Հասնելով իրանց ցանկացո՞ծ տեղը՝ հօտերը զբաղւում են ձկնիթ արտադրելով։ Վերջին գործողութիւնը կատարելուց յետոյ՝ հօտերը վերապատճենում են ու շուտով ցրւում։

Այսակը՝ ինչպէս տեսնում է ընթերցողը՝ բազմաթիւ անհատներ միանում են միայն ժամանակաւորապէս մի որ և է մասնաւոր նսկառակի համանելու համար, որից յետոյ նորից ցրւում են։ Պարզ է, որ այսական խմբւած անհատների մէջ չի կարող լինել ամուր կապ։

Թռչունների շրջանում աւելի յաճախ են լինում այդ տեսակ խմբութիւններ։ Լինում են դէպքեր, երբ թռչունները կազմում են խմբեր լնդհանուր ոչքերով սնունդ ճարելու նսկառակիվ, կամ թէ լնդհանուր թշնամիններից իրար պաշտպանելու համար։

Ամեն մի թռչուն, ասում է պրոֆեսոր Մենզբիրը, լաւ գիտէ, որ անհամեմատ աւելի հեշտ է թշնամուն նկատել, երբ ինքը (թրուչունը) մենակ չէ, այլ ընկերներով։ Այն ինչ որ կարող է անհատելի մնալ մի անհատից, հազէւ թէ կարողանայ նկատել նաև այն գէպքում, երբ անհատներ շատ կան։ Մի անհատ կարող է յոգնել, նրան հանգստութիւն է հարկաւոր, նա չի կարող անդադար նայել իր շուրջը և այն ժամանակ, երբ սնունդ է լնդհակառակը՝ ներթով կատարել պահապանի դերը... Այսուեղ խկական հասարակութիւն ասւած բան չկաց. ամեն մի անհատ մնում է միւսների հետ իր յօժար կամքով և ամեն ժամանակ կարող է թռչնել մէկերին ու միանալ միւսների հետ ։ Նատ հեշտ է համոզւել, որ այդ տեսակ խմբութիւնների կազմելը հետեւանք է զիտակցութեան կամ այն համոզմունքի, որ աւելի քիչ վտանդ կայ խմբովին ապրելու ժամանակ։ Ում ծանօթ է թռչունների կեանքը, <sup>ու</sup> բանք լաւ զիտեն, որ բաւական է, եթէ շարդը (զայեա), կաչաղակը կամ կեռնիխը

(Ճրօնլի) նկատեն մօտեցող աղւէսին և ճիչ հանեն, իսկոյն այլտեղ դտնող բոլոր թռչունները հասկանում են այդ ճիշը. իսկոյն տվենքը իմանում են, որ մօտենում է թշնամին ու միջոցներ են գործ դնում նրա դէմ: Դրանով վտանգը անհետանում է: Այդպիսով մի թռչունի անհանդիստ ճիշը լսելիս՝ ամենքին տիրապետում է սպառնացող վտանգի զգացմունքը...» <sup>1)</sup>:

Աֆրիկայում կարան ասւած թռչունը նախազգուշում է միւս թռչուններին օձերից և առհասարակ թշնամիններից: Նոյն դերը յաճախ կատարում է նաև ջայլացրէ:

Ահա ինչ է պատմում կոռունիների մասին Ակսակովը: Այդ թռչունները գիշերելու համար ընտրում են մի որ և է բաց տեղ, մի քանի տեղերում դնում են իրանցից պահապաններ ու իրանք հանգիստ քնում՝ թագցնելով գլուխները թեւի տակ: Պահապանները չեն թագցնում թեւերի տակ իրանց գլուխները, այլ նայում են իրանց չորս կողմբ: Հենց որ պահապանները նկատում են որ և է կասկածելի առարկայ՝ իսկոյն ճիչ են հանում, զարթեցնում են ընկերներին և բոլորը միասին թռչում են:

Հիւսիսացին երկիրներում՝ մանաւանդ մի բանի կղզիների վրայ՝ խմբում են միասին զանազան տեսակների թռչուններ ահագին երաժներ կազմելով: Պատահում է, որ ամեն մի երամը կազմող թռչունների թիւը հասնում է տասնեակ հազարների: Այդ թռչունների խումբը այնքան մեծ է լինում; որ նրան անւանում են թռչունների սար:

Հենց որ «թռչունների սարին» մօտենում է մի որ և է անցանկալի հիւր, իսկոյն նրա վրայ թափւում են բազմաթիւ անհատներ առանց խարութեան. մինչեւ անգամ այն ժամանակ, երբ թշնամին ընդհանուր չէ այլ վտանգաւոր է միայն մի տեսակի թըլուչունների համար, միւս տեսակի թռչունները նոյնպէս օգնութեան են գալիս՝ կռւելով թշնամու հետո:

Այս տեսակ անորոշ խմբումներին նման է կոմմենտալի զմբը: Բերեմ մի քանի օրինակներ ցոյց տալու համար, թէ որպիսի երկոյթներն են անւանում «կոմմենտալիզմ»:

<sup>1)</sup> Պրօֆ. Մեսանիրք—նոյն տեղը, էջ 34.

Նկատած է, որ Pagodahil, eburnea ծովային թռչունները սովորութիւն ունին միշտ հետեւել ծովակովերին (մօրք): Դրա պատճառը՝ ինչպէս յայտնուեց՝ կայսանում է նրանում, որ այդ թռչունները սիրում են հեշտ կերպով կերակրեւել ծովակովերինունդի մնացորդներով:

Առհասարակ կոմմենտալիստներ կոչւում են այն կենդանիները, որոնք, խմբւելով իրանցից աւելի ուժեղների շուրջը, աշխատում են թեթևացնել իրանց համար մնունդ ճարելը: Կոմմենտալիստները՝ կերակրելով իրանցից աւելի ուժեղ կամ ճարպիկ կենդանիների օգնութեամբ՝ ըստ մեծի մասին առանձին վեստ չեն տալիս իրանց բարերարներին, զեռ շատ անդամ նոյն խակ օգուաներ ել են հասցնում:

Օրինակ կարելի է բերել Buphago Africa անւանող թռչուններին, որոնք սասարկ սիրում են փղերի հասարակութիւնը. 15 կամ 20 հատ այդ թռչուններից նստում են փղի մէջքին և հաւաքում ու ուսում են փղի մարմնի վերայ զանուող պարագիտներին: Որովհեւ և այդ գործողութիւնը օգտաւէտ է ոչ միայն թռչունների այլ և փղերի համար, ուստի այդ վերջինները ամեննեին չեն բարկանում Buphago Africa-ի բազմաթիւ անհատների համարձակութեան համար: Օգտելով այդ տեսակ ներողամութիւնից, թշունները նոյն խակ խաղեր են սարքում փղերի մէջքերին:

Այդպիսով թէ կոմմենտալի զմը և թէ անորոշ խմբւածքները թէկ ըստ երեսութիւն նման են խսկական հասարակութեանը, սակայն դոցա միջև կայ նաև խորը տարբերութիւն: Խսկական հասարակութեան անդամները միացած են լինում ամուր կերպով և երկար ժամանակով, մինչդեռ կոմմենտալիզմում և խմբւածքներում անդամները միանում են ժամանակաւորապէս, և նրանց միջի կապը անքան թույլ է լինում, որ անդամներից շատերը, երբ ցանկանան, կարող են դուրս գալ մի խմբից և միանալ միւս խմբերին:

Բացի դրանից, ամեն մի խսկական հասարակութեան մէջ լինում է աշխատանքի բաժանումը, այսինքն բոլոր անդաշներն էլ չեն պարապւում միեւնոյն աշխատանքով. անդամների մի մասը զբաղւում է, օրինակ, մնունդ ճարելով, միւսը պահապանների զեր է կատարում, երբորդը բուն է շինում և այլն: Այդ տե-

սակ աշխատանքի բաժանումն գոյութիւն չունի անորոշ խմբւածք-ներում և կոմմենալիստների շրջանում:

Անցնենք այժմ իսկական հասարակութիւններին:

### III

#### ՊԻՆՍԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Այդ միջանոները իրանց կեանքով արդէն թողնում են որոշ կերպով կազմակերպւած համանքի տպաւորութիւն: Ընդհանուր ոյժերով դոքա շինում են ընդհանուրի համար բուն, որը և կողնում են ծառերին կամ տներին:

Այսուեղ մենք առաջին անգամ նկատում ենք աշխատանքի բաժանումը: Օրինակ նոր սերունդներ արտադրելով զբաղւում են ոչ թէ բոլոր էգերը, այլ միայն դոցա մի մասը, միւսները պարապւած են լինում բազմաթիւ հասարակական աշխատանքներով: Պիծակների մի տեսակը ընդհանուր պաշտպանութեան համար ունենում է պահապաններ, որոնք կանգնում են մուտքի մօտ և խսկոն իմացնում են վտանգի մասին: Դորանից յետով ամբողջ համայնքը կատաղում է և դուրս թռչելով կծոսում է նրան, ով խանգարել է նրանց հանգատութիւնը՝<sup>1)</sup>:

Զայտոք է կարծել, թէ պիծակների պահապանները ունին առանձին լեզու իրանց միաքը ընկերներին յայտնելու համար. համայնքը իմանում է վտանգի մասին ոչ թէ շնորհիւ որ և է ձայնի պահպանների կողմից, այլ ուղղակի տեսնելով յուզւած պահապաններին: Երբ այս վերջինները՝ նկատելով թշնամուն՝ կատաղում են ու ներս վագում, իսկոյն յուղմունքը և կատաղութիւնը տարածւում է հասարակութեան մի ծայրից մինչև միւսը:

Հասարակական կեանքը միենոյն զարգացման աստիճանին չէ հասած պիծակների (օքա) զանազան տեսակներում: Կան պիծակներ, որոնց հասարակութիւնը բազկացած է առանձին առանձին ընտանիքներից առանց որ և է ամուր ներքին կապի: Մի բան միայն ցոյց է տալիս, որ այդ ընտանիքները պատկանում են մի հասարակութեան, նրանք

<sup>1)</sup> Թուուած – Социальная жизнь животныхъ, էջ 302.

ունենում են ընդհանուր պահապաններ բոլոր ընտանիքները պաշտպանելու համար։ Ուրեմն հասարակական կեանքը այդ պիծակների շրջանում գոնուում է զեռ սաղմացին գրութեան մէջ։ Մի բան ևս ապացուցանում է այդ միտքը. ըստ մեծի մասին գրանց հասարակութիւնը աեւում է ընդգամենը մի տարի։

Աւելի բարդ է կազմւած տաք երկիրների պիծակների հասարակութիւնը։ Նախ նրանց ըրջանում ամեն մի հասարակութեան կեանքը տեսում է աւելի երկար ժամանակ։ Յետով սերոնդ արտազրելու պաշտօնը կատարում է ամբողջ համայնքում միմիայն մի անհատ, մնացածները զրազուում են առօրեայ աշխատանքներով։ Կը նշանակի, որ այնաեզ աշխատանքի բաժանումը աւելի ևս սաստիկ է արտայացուում։ Խնչպէս երեսում է՝ մայր պիծակը, որի միակ գործը սերունդներ արտադրելն է, խաղում է մի տեսակ իշխանաւորի դեր հասարակութեան մէջ, որպէս հաւաք, ինչպէս պատմում է Ռուժէն, երբ սպանուում կամ պատահմամբ մեռնում է նա (մայր-պիծակը) համայնքը սկսում է արագ կերպով նւազել, իսկ բնի բնակիչները այդ կորսոսի պատճառով իրանց եռանդի մեծ մասը կորցնում են ու ցրւում։

Պիծակներին սաստիկ նման են՝ թէ մարմնի կազմւածքով և թէ հասարակական կեանքի կազմակերպութեամբ՝ իշա լեզուները, ուստի պահնձին հետաքրքրութիւն չի ունենալ զրանց վրայ երկար կանգ առնելլը։

### ՄԵՂՈՒՆԵՐԻ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԲԻ:

Թէև բաւական մեծ նմանութիւն կաց մեղուների և պիծակների հասարակութիւնների մէջ, սակայն անլիմելի ֆակտ է այն, որ մեղուները մի քանի քայլ աւելի առաջ են գնացել՝ համեմատելով պիծակների հետ։ Իսպ դրա մասին աւելի լաւ կը լինի խօսել մի փոքր ուշ, իսկ այժմ՝ ծանօթանանք մեղուների հասարակական կազմակերպութեան հետո։

Մեղուների ամեն մի համայնք սպարունակում է իւր մէջ բազմաթիւ անհատներ, մոտ 20,000, որոնք բաժանուում են մի քանի գասակարգերի. ա) բանւորների, բ) դաշեակների, գ) որձերին

Այդ բոլոր գասակարգերը հպատակում են մի անհատի, այն է

թագուհուն, որը կազմում է համայնքի կենդրությ, իշխանաւորը։ Թագուհին ոչ մի աշխատանքի չի մասնակցում, նրա միակ գործը ձու ածելն է։ Մի թագուհի լնդունակ է մի քանի ամսում ածելու մոտ 12,000 ձւաներ։ Խնչվէս երևում է ամբողջ համայնքը համարում է թաղուհու պաշտօնը ամենանշանաւորը, որովհետեւ ամենքը նրան պահպանում են, հոգասարութեամբ կառարում են նրա ցանկութիւնը և ազատում են ամեն տեսակ աշխատանքներից։ Համայնքի կազմակերպւելու ժամանակ սկզբում լինում են մի քանի թագուհիներ, որոնք սակայն անկարող են լինում ապրել միասին մի համայնքում։ Նրանց մէջ առաջանում է կռիւ և կենդանի է մնում միայն ամենաուժեղ թագուհին, մնացածները կոտրում են։

Բանւորների դասակարգը բաղկացած է լինում՝ նոյնպէս էպերից, որոնք սակայն բոլորովին անընդունակ են ձու ածելու։ Դրանց գրայ դրւած են ամենաածանր հասարակական աշխատանքները։ Գրանց գործն է շինել բնակարան համայնքի համար։ Բայց դրանից բանւոր-մեղուները անդադար թռչում են մի ծաղկից միսին՝ ամեն տեղ հաւաքելով մեղք և ծաղկիների փոշին, որից յետոյ պատրաստում են մնունդ ձագերի համար և մոմ բնակարանների համար։ Այն հրաշալի շինւածքը, որին մենք անւանում ենք խորիս (օտա), բանւորների աշխատութեան արդիւնքն է։ Մի խորիսի կառուցանելու համար աշխատում են բազմաթիւ բանւորներ։ Մի անհատ շինում է խորիսի մի մասը, միւները տանջում են խորիսի միւս մասերի վրայ։

Դայեա կները բոլորովին նման են բանւորներին, միայն նրանց գործը կայանում է ձագուկների խնամելում։ Նրանք են ձագերին մնունդ տւողները, մաքրողները։

Որձերը (Երանեա) համայնքի ամենաածոյլ անդամներն են, նրանք ոչ մի աշխատանքում չեն մասնակցում։ Ենրանք՝ ասում է պրոֆ։ Մենքբիրը՝ մի տեսակ արիստոկրատիա են կազմում։ ուսում են, թրեւն գալիս թագուհու ետեից, նրա հետ միասին ձագեր են արտադրում և ոչինչ չեն անում։ Կէսօրին սրանք դուրս են թռչում զբօռնելու, թռչուատում են տերեւների, ծաղկիների շուրջը, իսկ օրւաց մնացած մասը անց են կացնում փետակում։ Նրանք շատ են քնում,

զարթնելով՝ թրե են զալիս թագուհու եռեկից կամ ուսում են։ Նրանց ինչ, որ բանւորները սարսափելի աշխատում, տանջնում և զրկանքներ են կրում։ Այդ որձերի դործը չէ։ Բանւորները պէտք է նրանց կերակրեն, նրանց համար բնակարան շինեն, որովհետև առանց նրանց՝ համացնքը ի կարող կառավարել, առանց նրանց չեն կարող ծնել նոր մեղուներ։

Բացց որձերի ձրիակերութիւնը անվերջ չէ շարունակում։ Աշնանը՝ երբ թագուհին այլ ևս ձու չի ածում, երբ ուրեմն որձերը այլ ևս անհրաժեշտ են լինում։ Հասարակութեան գործունեաց անգամները յարձակում են նրանց վրայ. մի մասը կոտրում են, միւսներին դուրս են խռում վեթակներից։ Հասարակութիւնից դուրս դցւած որձերն ել շուտով կոտրուում են մնանդ չլինելու պատճառով։ Այդպիսով համացնքը մաքրուում է անպէտք և ձրիակեր անհատներից։

Համայնքի պաշտպան ու մը: Մեղուները պիծակների նման ունենում են պահապաններ, որոնք, կանգնած փեթակի մուտքի մօմ՝ պաշտպանում են հասարակութիւնը թշնամիներից։ Իսկ մվքեր են մեղուների թշնամիները։ Տարաբաղդաբար մեղուները շատ թշնամիներ ունեն։ Նրանց թշնամիների թւին պատկանում են օրինակ մի ուստակ թիթեսներ (Acherontia atropos—«մերտվալ գոլովա»), խխունջները (γλαττεῖ), մկները... Իացի դրանցից մեղուների ամեն մի համացնքի համար թշնամի են լինում ըստ մեծի մասին միւս համացնքների մեղուները։ Այդ պատճառով մի որ և է համացնքի մէջ մուտք չեն կարող ունենալ ոչ մի կողմնակի՝ այդ հասարակութեանը չպատկանող՝ մեղու։ Իսկ եթէ նա գուով ցանկանաց ներս պրծնել վետակի մէջ, նրանց խակոցն կը սպաննեն պահապանները։ Պատահում է, որ վետակի մէջ են մտնում մկները կամ խխունջները։ Չնայած իրանց մարմնի մեծութեանը, դրանք ել սպանեում են մեղուների կողմից և դուրս են դցւում վետակից։ Սակայն ի՞նչպէս կարող են մեղուների պէս վոքրիկ կենդանիները հեռացնել վետակից այնպիսի մեծ կենդանիների տեսակները, որպիսիք են մկները և խխունջները։ Նրանց համար անհնարին կը լինէր բարձրացնել նոյն իսկ խխունջի գիւակը, ել չեմ ասում մկան դիակի մասին։ Մեղուները մի վերին աստիճանի սրամիտ միջոցի են դիմում, երբ ցանկանում են վե-

տակից հեռացնել որ և է կողմնակի ծանր կենդանու զիակը նրանք կծելով պոկում են դիակից փոքրիկ մասեր, որոնց և հեռացնում են փետակից մինչև որ այդ կենդանիների գիտակներից կը մնայ միմիայն կմախը:

Մեղուները սաստիկ վախենում են վերև լիշած Acherontia atropos թիթեռից, որը մեծ վնասներ է հասցնում մեղուների հասարակութեանը, երբ յաջողում է ներս մտնել փետակի մէջ. Այդ պատճառով մեղուները նրանց դէմ առանձին միջոցներ են դործ դնում: Հէնց որ հեռւից նկատում են մօտեցող վնասակար թիթեռին, մեղուները իսկոցն փետակի մուտքը ծածկում են մոմով, որ սկզ զի թիթեռը չկարողանայ ներս մտնել: Մուտքի միայն մի փոքրիկ մասնէ բաց թողնուում, այն էլ նրա համար, որ մեղուները կարողանան մտնել փետակի մէջ կամ դուրս գալ. և այդ բաց թողած ծակը ազնքան փոքրիկ է լինում, որ նրա միջով մեղուները ազատ կարող են անցնել, իսկ թիթեռը ոչ:

Գողութեան սովորութիւնը մեղուների շրջանում վերև ես պատմեցի, թէ որպիսի գործերով են զբաղւած լինում բանւոր-մեղուները: Մենք տեսանք, որ բանւորների մի մասը վաղ առաւտօնից սկսած թռչում են ծաղիկներից ծաղիկներին ամեն տեղ ժողովելով մեզր և ծաղկի փոշի: Որովհեաև այդ աշխատանքը սաստիկ ծանր է լինում, ուստի բանւորներից մի քանիսները ձգտում են մի կերպ թեթեւացնել նրան և իրրև հետևանք այդ ձգտումին՝ առաջանում է գողութեան սովորութիւնը:

Բանւոր մեղուներից մի քանիսները բարւոք են համարում՝ ամբողջ օր տանջւելու տեղ՝ հեշտ կերպով օգտւել ուրիշ համայնքներին պատկանող մեղուների ժողոված մեղրը:

Գող մեղուները, լաւ իմանալով թէ ինչքան վտանգաւոր է իրանց արեստը, մեծ զգուշութեամբ են անում իրանց գործը: Մօտենալով ուրիշ համայնքի փետակին՝ զաղանագողի ներս են մանում մէջ ու այնտեղից՝ գողանալով մեղրը՝ թռչում տանում են իրանց սեպհական փետակը:

Եթէ այդպիսի առանձին անիրաւներին յաջողւում է կողոպուտը, ասում է Զորջ Ռոմենսը, նրանց վատ օրինակին հետևում են նաև համայնքի մնացած անդամները: Այդպէս է լինում, որ մի

որ և է մեղսի ամբողջ հասարակութեան մէջ զարգանում են աւազակացին սովորութիւնները, և երբ այդ պատահում է՝ այն ժամանակ մեղուները սկսում են կողոպտել միասին... Այս դէսլքում օտար փետակի վրայ յարձակուում է մեղուների ամբողջ մի զօրք: Ակաւում է կռիւ և, եթէ յարձակողներին յաջողւում է ոչնչացնել դիմադրութիւնը, նրանք իսկոյն որոնում են օտար համայնքի թափուհուն և գտնելով սպանում են նրան: Դրանով կատարելապէս շփոթեցնում են թշնամիններին ու յետոյ կողոպտում են առանց դժւարութեան»<sup>1)</sup>:

Մի փետակ կողոպտելուց յետոյ աւազակները յարձակուում են միւսների վրայ:

«Պատահում է, որ աւազակ-մեղուները յարձակուում են իրանց զոհների վրայ դաշտում՝ փետակներից բաւական հեռու: Այդ տեսակ կողոպտուած կատարուում է չորս կամ հինգ մեղուներից բազկացած խմբերով, մեղուները յարձակուում են մի (օտար) բանոր մեղսի վրայ, բանում են նրա թաթերից և ձգձգում, մինչև որ նա կը հանի իր լեզուն, որից նրանք հերթով լիզում են մեղը ու յետոյ բաց են թողնում իրանց զոհ...»<sup>2)</sup>:

Օդի նորոգումը (վենտիլացիա) փետակի մէջ նոյն պէս կազմում է համայնքի ամենագլխաւոր հոգսերից մէկը կը լինի և ամենագլխաւոր մտաքերենք, որ մեղուների ամեն մի հասարակութիւն՝ բազկացած մօտ 20,000 անհատներից՝ ապրում է փետակում, ուր տեղ և օդ չափազանց քիչ է մի այդպիսի բազմանդամ համայնքի համար, այն ժամանակ մենք կը համոզւենք, որ օդի նորոգելլ փետակում ոչ միայն օդուահետ է, այլ միանդամայն անհրաժեշտ:

Այս բանում՝ ինչպէս երևում է իրանք մեղուներն ևս համոզւել են. նրանք գիտեն, որ, երբ երկար ժամանակ օդը փետակում չի մաքրւում, համայնքի մէջ տարածւում են վերին աստիճան վտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւնների Պատահում է, որ շնորհիւ այդ հիւանդութիւնների համայնքի խոշոր մասը ոչնչանում է:

<sup>1)</sup> Джоржъ Роменсъ—Умъ животныхъ, § 173.

<sup>2)</sup> Джоржъ Роменсъ—նախ տեղ, նոր էջը.

Աւրեմն օդի նորոգումն անհրաժեշտ է, զա՝ կարելի է ասել՝ կազմում է հասարակութեան համար կեանքի և մահի հարց: Բայց միթէ հնար սոր բան է, որ մեղուների պէս փոքրիկ էակները կարողանան լմբոնել օդի մաքրութեան անհրաժեշտութեան գաղափարը:

Ֆակոները ցոյց են սալիս, որ մեղուները կատարելապէս լմբոնել են այդ գաղափարը: Թէ ինչպէս է պատահել այդ հանգամանքը՝ ես չգիտեմ, միայն ֆակոն այն է, որ մեղուները պարբերաբար նորոգում են օդը իրանց բնակարանում:

Ահա թէ ինչ է պատմում այդ մասին ჩիւխնէրը:

Այն մեղուները, որոնց յանձնուած է օդի մաքրելու սաշտօնը, կանգնում են ֆետակի մէջ ուղիղ կանգերով և զանազան բարձրութեան վրայ՝ արագ շարժելով իրանց թևերը՝ քշում են օդը փոքրիկ հոսանքներով: Այդ փոքրիկ հոսանքներից դոյանում է մի զօրեղ հոսանք, որը անցնում է ամբողջ ֆետակի միջով և նորոգում օդը: Փետակի մուտքի մոտ էլ կանգնում են մեղուները և նոյնպէս թափահարում թևերը, այդ էլ արագացնում է արտաքին օդի մանելը ֆետակի մէջ: Այդ կերպով գոյացած օդի հոսանքը այնքան զօրեղ է լինում, որ կարողանում է արագ շարժել ֆետակի մուտքի առաջ քաշ արած թղթի կտորները: Մինչև անգամ՝ ինչպէս առում է Հոռ բերը՝ ֆետակի մէջ գոյացած հոսանքը կարողանում է հանգցնել վառած լուցին: Եթէ պահենք մեր ձեռքը ֆետակի առաջ՝ պարզ կերպով կը զգանք քամին:

Տարաբաղդաբար մեղուները չեն կարող ամբողջ տարին կատարել այդ օգոստաէտ գործը: Օրինակ ձմեռները ցրտի պատճառով օդափոխութիւնը սաստիկ դժւարանում է, երկար ժամանակ ֆետակի մէջ մնում է անմաքուր օդը: Այդ է պատճառը, որ ձմեռներն աւելի յաճախ են լինում ֆետակում տարափոխիկ հիւանդութիւններ:

Մեղուների ճարտարապետական տաղանդը վաղուց է, որ ապշեցրել է մարդկանց: Գիտնականների միաձայն կարծիքով՝ մեղուների խորիսլը (շօթ) պատկանում է բնութեան ամենաերկելի հրաշալիքների թւին: Մենք արդէն զիտենք, որ խորիսլը կառուցանում են մոմից բանւոր-մեղուները:

Ընթերցողին յացնի է, որ ամեն մի խորիսլ բաղկացած է լի-

նում բազմաթիւ մանր բներից (բջիջներ), որոնց մէջ մեղուները ժողովում են մեզը: Բները վեցանկիւնի են և շարւած են կարգով այնպէս, որ նրանց արանքներում չեն մնում բացտեղեր:

Այժմ տեսնենք թէ ինչովէ զարմանալի խորիսխի կազմւածքը Խորիսխները կառուցանելիս մեղուները ձգտում են երկու նախակի համակառ, նախ՝ որովհետեւ փետակում տեղ շատ քիչ է լինում, ուստի անհրաժեշտ է կառուցանել խորիսխը այնպէս, որ անպէտք մնացած տեղեր չլինեն: Աւրիշ խօսքերով՝ խորիսխի բները պէտք է այնպէս լինեն շինուած, որ կարողանան լստ կարելովն շատ մեզը պարունակել իրանց մէջ: Միաս կողմից՝ ինկատի առնելով այն հանդամանքը, որ մոմ արտադրելը շատ ծանր աշխատանք է մեղուների համար, պարզ է, որ մեղուները պէտք է աշխատեն՝ որքան հնարաւոր է տնտեսաբար գործ ածել թանգագին մոմը խորիսխ շինելու ժամանակ:

Աւրեմն մի կողմից պահանջւում է, որ խորիսխի բները ունենան ինչքան կարելի է մեծ ծաւալ. միւս կողմից անհրաժեշտ է ինչքան կարելի է քիչ մոմ գործ ածել շինութեան համար: Արդ ժրպիսի ձեւ պէտք է ունենան խորիսխի բները, որպէս զի հնարաւոր լինի երկու նպատակներին էլ հասարաւոր լինի: Բանից դուրս է գալիս, որ այդ հարցին պատասխանելը այնքան էլ հեշտ բան չէ հետևեալ պատճառով: Այդ հարցին պատասխանելու համար հարկաւոր է իմանալ, ինչեւ կարծում ինչ... Բարձրագոյն մաթեմատիկա! Միայն բարձրագոյն մաթեմատիկայի օգնութեամբ կարելի է վճռել այն հարցը, թէ ժրպիսի ձեւ պէտք է տալ բներին, որպէս զի համ լստ կարելովն քիչ մոմ գործ ածելի, համ էլ բները ունենան լստ կարելովն մեծ ծաւալ: Մաթեմատիկոսները արդէն զբաղւել են այդ հարցով. ծանր ու բարակ մտածելուց յետոյ նրանք եկել են այն եղբակացութեան, որ երկու նստատակներին համակարգութեան համար անհրաժեշտ է բներին տալ վեցանկիւնի ձեւ: Խսկ մեզ յախնի է, որ մեղուները տալիս են իրանց բներին իսկ և իսկ այդ ձեւը. նրանք շինում են վեցանկիւնանի բներ: Աւրեմն մի խնդիր, որի վճռելու համար անհրաժեշտ է իմանալ մաթեմատիկա, զարգուց արդէն վճռել են մեղուները...

«Մեղուները, ասում է դոքտոր Ռէյտը, այնպէս ծշտիւ հետեւում են երկրաշափութեան օրէնքներին, որ կարծես թէ իմանում են այդ օրէնքները»:

Այս այն հանգամանքն է, որ զարմացրել ու զարմացնում է գիտականներին: Ի՞նչպէս բացարել, որ մեղուները՝ անընդունակ լինելով ըմբռնել մաթեմատիկացի օրէնքները՝ այնու ամենայնին ծշտիւ հետեւում են նրանց: Ի՞նչ ասել կուզի, որ փորձեր արւել են բացատրելու այդ վերին աստիճանի տարօրինակ երևոյթները և այդ փորձերից ամենայաջողը համարում է Զարլս Դարւինի հիսորթէզըր Սակայն ես անյարմար եմ համարում առաջ բերել այստեղ Դարւինի բացատրութիւնը, որովհետեւ գուցէ նա ձանձրացուցի: Թւագընթերցողին:

Այժմ, եթէ հոմեմատենք մեղուների հասարակութիւնը պիծակների հետ, մենք անշուշտ կը գանք այն համոզմունքի, որ թէւ այդ երկու տեսակ հասարակութիւնները իրար նման են, բայց մեղուների հասարակութիւնը իր զարգացման աստիճանով անհամեմատ աւելի բարձր է պիծակների հասարակութիւնից:

ա) Ներքին կազը մեղուների համայնքում անհամեմատ աւելի ամուր է, քան թէ պիծակների շրջանում:

բ) Աշխատանքի բաժանումը աւելի կատարեալ, աւելի զարգացած է մեղուների շրջանում:

գ) Պիծակների շինութիւնները անհամեմատ աւելի սոսոր են քան մեղուներինը և այլն:

(Կը արունակեի)